Զեկույց

Մասիս քաղաքային համայնքի 2021 թ. բյուջեի վարչական և ֆոնդային մասերում փոփոխություններ կատարելու մասին

Համայնքի 2021 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերի տարեսկզբի մնացորդները համայնքի բյուջեի ֆոնդային մասի եկամուտներում ներառելու համար անհրաժեշտ է ֆոնդային մասի մուտքերը ավելացնել 518 470 000,80 դրամի չափով, որից՝ վարչական մասի մնացորդը կազմում է՝ 59 857 370,6 դրամ, ֆոնդային մասի մնացորդը՝ 458 612 630,2 դրամ:

2021 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել 5 սուբվենցիոն ծրագիր, որից սուբվենցիայի տրամադրվող չափը կկազմի 318472,0 հազար դրամ: ֆոնդային բյուջեի ակնկալվող եկամուտները անհրաժեշտ է ավելացնել 318472,0 հազար դրամով:

2021 թվականի ընթացքում նախատեսվում է սուբվենցիոն ծրագրերով իրականացնել հետևյալ կապիտալ աշխատանքները.

1.Մասիս քաղաքի Հերացի և Հանրապետության փողոցների խաչմերուկից մինչև 1-ին փողոց ճանապարհային հատվածի հիմնանորոգում, սուբվենցիայի չափաբաժինը՝ 45%.

2. Մասիս քաղաքի Հերացի և Հանրապետության փողոցների խաչմերուկից մինչև 1-ին փողոց ճանապարհային հատվածի ջրահեռացման համակարգի հիմնանորոգում, սուբվենցիայի չափաբաժինը՝ 55%.

3. Մասիս քաղաքի 1-3-րդ փողոցների և 1-10-րդ փողոցների փակուղիների գործող լուսավորության ցանցի շարունակության, 1-7-րդ թաղամասերի և Մասիս Կայարանի մի հատվածի արտաքին լուսավորության ցանցի անցկացման աշխատանքներ, սուբվենցիայի չափաբաժինը՝ 50%.

4. Մասիս քաղաքի թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հիմնանորոգման աշխատանքներ, սուբվենցիայի չափաբաժինը՝ 50%..

5. Մասիս քաղաքի նախկին մարզադպրոցի ՄՊՍԿ և ՔԿԳ ՀՈԱԿ-ների մասնաշենքերի հիմնանորոգման և ջեռուցման համակարգի անցկացման աշխատանքներ, սուբվենցիայի չափաբաժինը՝ 30%. .

Համայնքի բյուջեի Ֆոնդային մասում ընդհանուր 836942,0 հազար դրամ ակնկալվող եկամուտների հաշվին նախատեսվում է կատարել հետևյալ կապիտալ ծախսերը՝

	Անվանում	*գումար հազ. Դրամ*	*Որից սուբվենցիայի ակնկալվող չափը*
1	Մասիսի քաղաքապետարանի վարչական շենքի տանիքի, 3-րդ հարկի դահլիճի, միջանցքի, պատուհանների և 3-րդ, 4 –րդ հարկերի աշխատասենյակների հիմնանորոգում	89170,0	

2	Մասիս քաղաքի Հերացի և հանրապետության փողոցների խաչմերուկից մինչև 1-ին փողոց ճանապարհային հատվածի հիմնանորոգում	100420,3	45189,1
3	Մասիս քաղաքի Նոր թաղամաս 1-ին շենքի և դիմացի այգու միջանկյալ հատվածի, 1-ին շենքին հարակից Հայփոստի և սրճարանի միջև գտնվող անցումային հատվածի սալիկապատման նախագծա-նախահաշվային աշխատանքներ և փորձաքննություն	495,0	
4	Մասիս քաղաքի 3-րդ թաղամասի 16 շենքի բակի բարեկարգման նախագծա-նախահաշվային աշխատանքներ և փորձաքննություն	440,0	
5	Մասիս քաղաքի Նոր թաղամասի 37 շենքի բակի բարեկարգման նախագծա-նախահաշվային աշխատանքներ և փորձաքննություն	385,0	
6	Մասիս քաղաքի Հերացի և Հանրապետության փողոցների խաչմերուկից մինչև 1-ին փողոց ճանապարհային հատվածի ջրահեռացման համակարգի հիմնանորոգում	51803,0	28491,6
7	Մասիս քաղաքի 1-3-րդ փողոցների և 1-10-րդ փողոցների փակուղիների գործող լուսավորության ցանցի շարունակության, 1-7-րդ թաղամասերի և Մասիս Կայարանի մի հատվածի արտաքին լուսավորության ցանցի անցկացման աշխատանքներ	221251,0	110625,9
8	Փողոցների լուսավորման ցանցում ռկա ԴՆԱՏ լուսատուների փոխարինման համար LED լուսատուների ձեռք բերում	3000,0	
9	Մասիս քաղաքի 5-րդ դպրոցին հարակից ֆուտբոլի դաշտի հիմնանորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքներ	644,0	
10	Մասիս քաղաքի 5-րդ դպրոցին հարակից ֆուտբոլի դաշտի հիմնանորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքների փորձաքննություն	61,6	
11	Մասիս քաղաքի թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հիմնանորոգման աշխատանքներ	187027,7	93513,9
12	Մասիս քաղաքի թիվ 7 մանկապարտոզ ՀՈԱԿ-ի, թիվ 2 մանկապարտոզ ՀՈԱԿ-ի մասնաշենքի, թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի սան հանգույցների հիմնանորոգման, թիվ 4 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի մասնաշենքի տանիքի մասնակի, 1 խմբասենյակի սան հանգույցների հիմնանորոգման և միջանցքի սալիկապատման նախագծա-նախահաշվային աշխատանքներ և փորձաքննություն	2698,1	

13	Երաժշտական դպրոցի դահլիճի , պատուհանների և սան հանգույցների հիմնանորոգման աշխատանքներ /2020թ.աշխատանքների շարունակություն/	6397,8	
14	Մասիս քաղաքի նախկին մարզադպրոցի ՄՊՍԿ և ՔԿԳ ՀՈԱԿ-ների մասնաշենքերի հիմնանորոգման և ջեռուցման համակարգի անցկացման աշխատանքներ	135505,5	40651,6
15	Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների Վարչական սարքավորումների ձեռք բերմանը	37643,0	
	Ընդամենը ծախսեր	***836942,0***	***318472,0***

2021թ համայնքի բյուջեի վարչական մասում պահուստային ֆոնդ ձևավորելու նպատակով որոշակի ծախսեր ամբողջությամբ չեն ներառվել վարչական բյուջեում: Ըստ ծրագրերի ծախսերն ամբողջությամբ ներառելու համար անհրաժեշտ է պահուստային ֆոնդը նվազեցնել 19936,0 հազար դրամով և ուղղել հետևյալ ծախսերին՝

Համայնքում թափառող շների վնասազերծման ծառայություններ ձեռք բերելու համար հատկացնել 4500,0 հազար դրամ, փողոցների լուսավորման էներգետիկ ծախսերին հատկացնել՝ 5000,0հազար դրամ, համայնքում անցկացվող մշակութային միջոցառումների անցկացման համար՝ 5000,0 հազար դրամ, սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցելու նպատակով այլ նպաստներ հոդվածով նախատեսված միջոցներն ավելացնել՝ 5436,0 հազար դրամով:

Աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ Լ. Աստաբացյան

Ֆինանսական բաժնի պետ՝ Ն. Սահակյան